

Նստուցանելին զգանկալի մանուկն Յուսիկ յարժոռ հայրապետական: 12 Սա զիետ հաւրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր, հայրական չափոցն նմանեալ ծնունդ, ամենեւին զամենայն յամենայնի հրեշտակակրան զանձն ցուցանէր, զամենայն ըստ պարգեւացն Աստուծոյ զշնորհացն<sup>1</sup> կատարէր: 13 Քրիստոսական բանաւոր խաշանցն հովուելով, աւետարանական պատգամաւորաւքն խրատելով ընծեռեցաւ: 14 Չի աւուրբբ մանուկ, տիաւբ առոյգ, եւ բարձր հասակաւ. զեղով երեսաց սքանչելի եւ չքնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա ի վերայ երկրի: 15 Սուրբ եւ պայծառ հոգւով, ամենեւին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրեւ զբաջ սպառազէն Քրիստոսի, իբրեւ զախոյեան Նահատակ ի տղայութենէ տիոց Նշկահեր, աներեւոյթ թշնամոյն յաղթութեամբ սպառնացեալ: 16 Ակն առնուկ կամ աչառել մարդկան բնաւ ամենեւին ոչ զիտեր. այլ զբան Յոգւոյն Սրբոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր: 17 Իսկ շնորհատուր Յոգւոյն լցեալ զնա, զիտութեանն էր աղբիւրացեալ զամենայն լսելեացն ցուղս<sup>2</sup> ականջացն եւ սրտիցն երկրին:

18 Իսկ թագաւորն Տիրան, եւ այլ մեծամեծ աւագանին Նախարարացն, կամ աշխարհն ամենայն, ոչ ինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ զնացեալ լինէին: 19 Քան զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանքն սպանութիւնս՝ անխտիր ի հեղուկ զարիւն արդար ի տարապարտուց՝ գործէին եւ այլ մեղս բազումս. եւ ոչ հայէին ի հրամանս վերնոյն, ի հանապազորդ լսելոյն ոչ խրատեալք՝ ի յուշն Նոցա առնելոյ զԱստուծոյ յոյսն: 20 Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն, վարժ բանիւքն համեստութեանն քրիստոսական խրատուն՝ հանապազ յերեսն յանդիմանութեամբ հարկանելով խրատելով կշտամբելով, արկաներ զսպառնումն<sup>3</sup> տանջանաց յաւիտենական բարկութեանն անշեջ հրոյն դատաստանին պատմելով, բողոքէր: 21 Չի թեպետ աւուրբբ մանուկ էր, այլ զաւագութիւն ծերութեան խրատուն յինքեան ցուցանէր, զհայրենի գործ խրատուականն զառաւելութիւն<sup>4</sup> քաջութեան կատարէր: 22 Յարցն նմանեալ ի մանկութեան<sup>5</sup> իմաստութեան, զծերութեան պատիւն պատուակալ պատուականութեանն զհանճարոյն զուարթութեանն ուշութեանն, իբրեւ զծաղիկ ի դիտաւորութեանն հասեալ, վասն ճշմարտութեանն մինչ ի մահ մարտնչէր. Նախ զանձն ապրեցուցանելոյ, եւ վասն այլոց հոգւոց զնոյն առնել կամեր: 23 Այնչափ էր երկիւղած ի Տեառնէ, զի ոչ զսեր եւ ոչ զահ թագաւորին առ ոչինչ համարէր: 24 Իսկ զիտութեամբն Աստուծոյ, դպրութեան

1 Յօր. միում զշնորհսն

2 Յօր. միում ցաղս

3 Յօր. զսպանումն

4 Յօր. միում զառաքելութեան

5 Յօր. միում ի մանկութենէ